

Մենակ եմ :
ի՞նչպէս յայտնուեցի ծովի վրայ ամառային այս
լուսնկայ գիշերին :

* * *

Պոլիս եմ գնում . հրա՛չք է այս .

Գնում եմ Մեծ Եղենի քաղաքը , այն նզովւած
չնոցը , ուր գարբնեցին բոլոր գժոխային դաւերը ,
բոլոր ոճիրները հայ աշխարհի ու ժողովրդի դէմ :
Երեսուն տարւայ պայքարից յետոյ , հոգիս՝ ան-
յաղթ , կամքս՝ երկաթ , հաւատս՝ գրանիտ , որպէս
իմ ցեղը , գնում եմ բաց ճակատով թշնամու դուռը
բաղիսելու : Ու մի հզօր , գերիշխող իղձ է փոթոր-
կում էութիւնս— տեսնել աշխարհի մեծագոյն չա-
րագործներին , նայել նրանց աչքերի մէջ , բոլոր ա-
նասելի ցաւս ու ցասումն ճչալ ու յետոյ . . . Ու թը-
ւում է՝ թէ իրօք ես միայն դրա համար եմ գնում .
արիւն արցունքի մէջ է ծփում հայրենիքս . ամիս-
ներ առաջ վատարաղդ զանգահարն եղայ մեր ահա-
զանդին , որի զօղանջները ,

«Թրթոսուն ծիծաղ մահու դժխեմ . . . »

Հնչւեցին Հայ աշխարհի մի ծայրից միւսը : Ու
կատարւեց . գթութիւն չը կայ . հազար տարիների
պայքարն է այս , որ անողորմ ու կատաղի յեղյեղ-
ւում է մեր լեռներում . վերջին պայքա՛ր , ուր մէկը
պիտի մեռնի . պատմութիւնը կ'ասի , թէ ո՞վ յաղ-
թեց : Այսօր սակայն՝ մենք ենք պարտածը : Զէն-
քով , բոռնցքով , եղունգներով ու ակռաներով
մարտի ելանք , բայց թշնամին վարարեց մեզ թւով ,
դաւով , նենդութեամբ : Թշնամի առջեւից , թշնամի

թիկունքից , ներսից , գրսից , հարեւանի տնից , ա-
մէն կողմից : Յիշում եմ մեր յանդուզն ազատա-
մարտի բոլոր արիւնու գրւագները , երգումից
մինչեւ Ալէքսանդրապոլ , մինչեւ Ղարաքիլիսա ,
մինչեւ Սարդարաբագի դաշտերը : Հպարտ Ղարա-
բաղի կուռ կորովի զաւակները եւ Արարատեան աշ-
խարհի երազուն հայրենաշունչ տղաները հրաշք
գործեցին , Ղարաքլիսայի ճակատամարտում . Աւա-
րայրի գաշտի շունչն էր սաւառնում ճակատամար-
տերում . գրոհի դէմ գրոհ , համազարկի դէմ՝ հա-
մազարկ , մինչեւ մեր վերջին փամփուշտը , մինչեւ
մեր վերջին կաթիլ արիւնը :

Տրտմութիւն ունի հոգիս , տրտմութիւնը ծովի :
Յիշում եմ կոռի ձորերի մէջ խմբած մեր
փախստական ժողովուրդը . առջեւից՝ թշնամի , յե-
տեւից թշնամի : Եւ յետոյ՝ մեր խուճապած ամբոխ-
ների փախուստը , օրեր , շաբաթներ , անվերջ կա-
րաւաններով , սայլերով , ոտքով , դէպի հիւսիս ,
կովկասեան Լեռներէն անդին , դաւադիր , մահահոս
ճամբաններով : Թիւրքն էր դալիս . . .

Պարտած ենք , պարտած ենք այսօր :

Ուր եմ գնում իմ երեսուն տարւայ յամառ ,
բաց ճակատ պայքարից յետոյ . գնում եմ ցասո՞ւմս
ճչալու . . . ո'չ , ո'չ , այդ չէ . գնում եմ , որովհետեւ
դո՞ւ այզպէս կամեցար իմ աւեր Հայրենիք , իմ ծը-
ւատած , իմ նահատա՞կ ցեղ :

* * *

Ահա գնում եմ հնազանդ . եւ առաջին անդամ իմ
կեանքում զանդատ ունիմ քեզնից Հա՛յ ժողովուրդ ,
այս դաժան , այս անողորմ առաքելութեան հա-